ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ 2016Թ. ՕԳՈՍՏՈՍՅԱՆ ԽՈՐՀՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԳԱՅԱՆԵ ՍԱՅԱԴՅԱՆԻ ԶԵԿՈՒՅՑԸ

30.08.2016թ.

Մեծարգո մարզպետ, հարգարժան հյուրեր, սիրելի գործընկերներ

Ուրախ եմ ողջունել Ձեզ նոր ուսումնական տարվա շեմին, նոր ուսումնական տարում ակնկալում եմ բոլորիս համատեղ, հետևողական աշխատանքը՝ նպատակաուղղված մարզի աշակերտների կրթության և դաստիարակության գործը պատշաճ մակարդակի հասցնելուն, նորանոր հաջողություններ արձանագրելուն:

2015-2016 ուսումնական տարում Արմավիրի մարզի կրթության համակարգը հաջողությամբ կատարել է իր առաքելությունը մատաղ սերնդի կրթության և դաստիրակության կազմակերպման ազգանվեր գործում:Մարզի հանրակրթական դպրոցներում ապահովվել է կրթական պետական ծրագրերի լիարժեք իրականացումը, կազմակերպվել է մի շարք հանրակրթական դպրոցների նյութատեխնիկական բազայի համալրումը:

Անցած ուսումնական տարում գործել են մարզային ենթակայության

- 91 միջնակարգ,
- 21 հիմնական, և
- 2 հատուկ դպրոցներ:
- Մարզի դպրոցներում ընդգրկված աշակերտների թիվը 2015թ. սեպտեմբերին կազմել է 31610, որից 3738-ը՝ առաջին դասարանցիներ:
- Նախնական կոմպլեկտավորման տվյալներով այս ուսումնական տարում մարզի դպրոցների աշակերտների թիվը կկազմի 32815, որից 3927-ը առաջին դասարանցիներ: Մարզի աշակերտների ընդհանուր թիվն աճել է 1205-ով, իսկ առաջին դասարան ընդունվող աշակերտների թիվը 189-ով:
- Մարզում առկա են քաղաքային և գյուղական 62 մանկապարտեզ, որոնցում գործում են 189 խումբ՝ 5178 երեխաներով:

- 2016 թվականին 1516 աշակերտներ ստացել են միջնակարգ կրթություն, հիմնական դպրոցներն են ավարտել 2516 աշակերտներ, ովքեր համալրելու են ավագ դպրոցները և այլ ուսումնական հաստատություններ:
- 2015-2016 ուսումնական տարում գերազանց առաջադիմություն է ցուցաբերել 5140 աշակերտ, գերազանցության նմուշի հիմնական կրթության վկայական է ստացել 70 շրջանավարտ:
- Մարզից պետական բուհական ընդունելության քննությունների արդյունքում շուրջ 635 շրջանավարտներ ընդունվել են հանրապետության տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ:
- Մարզի հանրակրթական դպրոցներում դասավանդում են 3276 ուսուցիչ, որոնցից 7-ը ստացել են տարակարգ:
- Ատեստավորվել են 471 ուսուցիչներ, 2016 թվականին վերապատրաստվել են ևս 428 ուսուցիչներ, որոնց ատեստավորումից հետո կավարտվի ատեստավորման հնգամյա ծրագիրը:

- Մարզում իրականացվել են <<Կրթության որակ և համապատասխանություն>> ծրագրի շրջանակներում նախադպրոցական կրթության միկրոծրագրեր 46 դպրոցներում, որոնցից 12-ն այս ուսումնական տարում:
- ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից կնքված հուշագրերի համաձայն մարզում կրթական տարբեր ծրագրեր են իրականցվել <<Պատանեկան նվաճումներ>> հասարակական կազմակերպության կողմից:
- Հուշագրի շրջանակներում <<Կրթություն Հայաստան>> ծրագրի շահառու հանդիսացող ևս 5 երիտասարդ մասնագետներ աշխատանքի են տեղավորվել մարզի տարբեր դպրոցներում:
- Մարզի դպրոցները համագործակցում են տարբեր միջազգային կազմակերպությունների և բազմաթիվ կրթական ծրագրերի հետ: Շարունակվել է Սարդարապատի միջնակարգ դպրոցի համագործակցությունը Հայաստանում Գերմանիայի դեսպանատան հետ իրականացվող ծրագրերում, այս տարի ևս 1 շրջանավարտ դեսպանատան կրթաթոշակի ծրագրով մեկնել է Գերմանիա՝ սովորելու:
- ՀՀ Արմավիրի մարզպետի 19.02.2016թ. N 23 որոշմամբ ստեղծված կազմկոմիտեն և առարկայական հանձնաժողովները 16 առարկաներից անցկացրել են դպրոցականների հանրապետական օլիմպիադաների տարածքային և մարզային փուլերը:

Տարածքային փուլը հաղթահարած 120 դպրոցի 629 աշակերտ մարզային հանձնաժողովի կողմից հնարավորություն է ստացել մասնակցելու օլիմպիադայի մարզային փուլին, որի արդյունքում 98 աշակերտ երաշխավորվել է մասնակցելու հանրապետական փուլին:

Հանրապետական կազմկոմիտեի կողմից 6 աշակերտ պարգևատրվել է 2-րդ կարգի դիպլոմով, երրորդ կարգի դիպլոմով՝ 12, գովասանագրերով՝ 15 աշակերտ:

«Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի օլիմպիադայի հանրապետական փուլում մարզի հավաքական թիմը գրավել է երկրորդ տեղը:

Լավագույն արդյունքներ են ցուցաբերել Վաղարշապատի N 4, Արմավիրի N 5 հիմնական, Արգավանդի, Սարդարապատի, Ալաշկերտի, Պտղունքի, Հայթաղի, Գրիբոյեդովի, Բամբակաշատի, Մուսալեռի, Ջանֆիդայի, Մրգաշատի N 1, Արշալույսի միջնակարգ, Էոռնեկյանի անվան, Վաղարշապատի N 5, Վաղարշապատի N 2, Արմավիրի N 4 ավագ դպրոցների աշակերտները:

Մարզի դպրոցականները ակտիվ մասնակցություն են ունեցել <<Կենգուրու>> միջազգային մաթեմատիկական օլիմպիադային, <<Մեղու>>՝ հայոց լեզվի և <<Ռուսական արջուկ>>՝ ռուսաց լեզվի հանրապետական օլիմպիադաներին՝ արժանանալով առաջին և երկրորդ կարգի մրցանակների, խրախուսական պարգևների: Հատկապես մեծ հաջողություններ են ունեցել Վաղարշապատի N 4 հիմնական և Ակնալճի միջնակարգ դպրոցների աշակերտները:

Պատշաճ մակարդակով մարզում անցկացվել է ՀՀ դպրոցականների 2015-2016 ուստարվա շախմատի օլիմպիադան:

Համագործակցելով Հայաստանի Շախմատի ակադեմիայի հետ կազմակերպվել է <<Շախմատ>> առարկան դասավանդող ուսուցիչների 2016 թ. վերապատրաստումը: Մարզի բոլոր հանրակրթական դպրոցներն ունեն շախմատի բարեկարգ և կահավորված դասասենյակներ:

Մարզի դպրոցները ակտիվորեն մասնակցել են «Պետական խորհրդանիշերի մրցույթին», որտեղ Մեծամորի N1, Հայկավանի և Նորավանի դպրոցների աշակերտները գրավել են մրցանակային տեղեր:

Մարզի դպրոցականների մասնակցությամբ կազմակերպվել են երգի, ասմունքի, ընթերցանության մրցույթներ, որոնց ընթացքում հայտնաբերվել են մարզի շնորհալի և տաղանդավոր երեխաները:

Ուսումնական տարվա ընթացքում դպրոցներում կազմակերպվել են միջոցառումներ, փառատոներ, ցուցահանդեսներ, մրցույթներ, մրցաշարեր, առաջնություններ՝ նվիրված պետական, ազգային և այլ տոներին, ազգային ավանդական ծեսերին ու ավանդույթներին, նշանավոր մարդկանց, իրադարձությունների հոբելյաններին ու տարելիցներին, անցկացվել են հանդիպումներ նշանավոր մարդկանց հետ, ցերեկույթներ, գրքի շնորհանդեսներ, քննարկումներ, կինոդիտումներ, պոեզիայի ժամեր:

- Նախորդ ուսումնական տարվա ընթացքում մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կողմից մարզային ենթակայության դպրոցներում կազմակերպվեց հայոց լեզու, մաթեմատիկա, անգլերեն, ֆրանսերեն և գերմաներեն լեզու առարկաների դասավանդման ուսումնասիրություն:

Իսկ ուսումնական տարվա ավարտին միջնակարգ դպրոցներում իրականացվել է 2016թ. պետական ավարտական քննությունների վերահսկողություն և մոնիթորինգ, որի արդյունքները ևս քննարկվել են դպրոցների տնօրենների խորհրդակցության ընթացքում:

Հարգարժան մարզպետ

Կարևորելով հայոց լեզվի, գրականության ուսուցման դերը գրագետ և հայրենասեր սերունդ դաստիարակելու գործում և հաշվի առնելով կատարված ուսումնասիրությունների արդյունքները, առաջարկում եմ 2016-2017 ուսումնական տարին մարզի դպրոցներում հայտարարել «Մայրենի լեզվի» տարի:

- Նախորդ ուսումնական տարվա ընթացքում ներառական կրթություն են իրականացրել 23 դպրոցներ՝ 735 երեխաների համար: Նախատեսվում է առաջիկա ուսումնական տարում մարզի 27 դպրոցներում հատուկ կրթական կարիքներ ունեցող նախնական տվյալներով 450 երեխաների համար ևս ստեղծել համապատասխան պայմաններ և ապահովել նրանց ինտեգրումը աշակերտական հանրությանը:

Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության, ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի և ՀՀ ոստիկանության Արմավիրի մարզային կառույցների հետ համագործակցությամբ աշխատանքներ են տարվել իրավախախտ, հանցագործության կատարման մեջ մեղադրվող անչափահաս երեխաների և նրանց ընտանիքների հետ: Իրականացված աշխատանքների արդյունքում 22 անչափահասներ դուրս են եկել հաշվառումից, 6 անչափահասների նկատմամբ նշանակվել են հասարակական դաստիարակներ, իսկ 1 անչափահաս տեղավորվել է Հանրապետական թիվ 1 կրթահամալիր:

- Մարզում կազմակերպվել է մրցույթների մարզային փուլը <<Տարվա լավագույն տնօրեն>>, <<Լավագույն ուսուցիչ>> և <<Լավագույն դաստիարակ>> անվանակարգերում, հաղթող են ճանաչվել Հովտամեջի միջնակարգ դպրոցի տնօրեն Նարինե Եղյանը, Վաղարշապատի N 8 հիմնական դպրոցի անգլերեն լեզվի ուսուցիչ Քրիստինա Նաջարյանը, Արմավիր քաղաքի N 10 մսուր-մանկապարտեզի դաստիարակ Թեհմինե Խաչատրյանը:
- Որպես նորարարական նախաձեռնություն Արմավիրի մարզպետի 2014 թվականի դեկտեմբերի 28-ի N 210 որոշմամբ 2015-16 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվել է <<Տարվա լավագույն դպրոց>> մարզային մրցույթը, որի արդյունքներն ամփոփվեցին դեկտեմբեր ամսին: <<Տարվա լավագույն դպրոց>> ամենամյա մրցույթի մասնակցության համար հայտ էին ներկայացրել մարզի 114 դպրոցից 55-ը: Սահմանված կարգով, դպրոցի և դպրոցի տնօրենի գործունեության գնահատման չափանիշներով՝ մարզպետին կից կրթության բնագավառի խորհրդակցական մարմնի մասնակցությամբ

տեղի ունեցած քննարկման արդյունքում որոշվել են մրցույթի չորս անվանակարգերում հաղթող դպրոցները, այդ թվում՝

«ՀՀ Արմավիրի մարզի լավագույն դպրոց» ամենամյա մրցույթի «Ուսումնադաստիարակչական աշխատանքների լավագույն կազմակերպում» անվանակարգում հաղթող է ճանաչվել Վաղարշապատի թիվ 4 հիմնական դպրոցը, «Ռազմահայրենասիրական և աշխատանքային դաստիարակության լավագույն փորձ» անվանակարգում՝ Նորակերտի միջնակարգ դպրոցը, «Գեղագիտական դաստիարակության լավագույն փորձ» անվանակարգում՝ Հովտամեջի միջնակարգ դպրոցը, իսկ «Նորարարական նախաձեռնություններ և այլընտրանքային ուսուցման լավագույն փորձ» անվանակարգում՝ Գետաշենի միջնակարգ դպրոցը:

«Լավագույն դպրոց» մրցանակին արժանացավ և մարզպետի կողմից պատվավոր գավաթ ստացավ Վաղարշապատի թիվ 4 հիմնական դպրոցը: Մրցույթի հաղթող ճանաչված դպրոցները ՀՀ Արմավիրի մարզպետի կողմից պարգևատրվել են հավաստագրերով և խրախուսական պարգևներով:

Նախատեսվում է մրցույթը դարձնել ավանդական, խրախուսել նորարական մոտեցումները, հետաքրքիր նախաձեռնությունները և իհարկե որակյալ կրթության և դաստիարակության գործընթացի բարեխիղճ և արդյունավետ իրականացումը:

- 2015-2016 ուսումնական տարում ևս 2 դպրոցներում սահմանված կարգին համապատասխան պատրաստվել են զենքի պահպանման սենյակները, միացվել պահպանման ձայնաազդանշանային համակարգերը: Ներկայում մարզի 97 դպրոցներ ապահովված են ուսումնական զենքով:
- 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում մարզի դպրոցները համալրվել են համակարգիչներով, դիդակտիկ նյութերով և ուսումնական գրականությամբ, վերանորոգվել և կահավորվել են լաբորատորիաներ, մարզադահլիճներ, շախմատ և ռազմագիտություն առարկաների կաբինետներ:
- Ձևավորվել և ՀՀ կրթության և գիտության նախարարություն է ներկայացվել ՀՀ Արմավիրի մարզի հանրակրթական դպրոցների 2016-2017 ուսումնական տարվա 1-12-րդ դասարանների դասագրքերի պատվերի հայտը (33138 դասագիրք), որով ամբողջությամբ ապահովվում է մարզի դպրոցների պահանջարկը: Արդեն ստացվել է առաջիկա ուսումնական տարվա համար անհրաժեշտ դասագրքերի ամբողջ քանակը, որ բաշխումը ընթացքի մեջ է: Մտահոգության տեղիք է տալիս վարձավճարների հավաքագրման կարգապահությունը, որի մասին են խոսում մարզի վճարման բացասական ցուցանիշները: (Ցանկանում եմ Ձեր ուշադրությունը հրավիրել վարձավճարների հավաքագրման ժամկետների վրա):
- Մարզի բոլոր դպրոցներում ձևավորվել և գործում են դասարանական և դպրոցական ծնողական, ինչպես նաև աշակերտական խորհուրդները, որոնք ակտիվ մասնակցում են դպրոցի կյանքին, իրենց ներդրումն են ունենում դպրոցի նյութատեխնիկական բազայի ամրապնդման, բարեկարգման, աշակերտների ժամանցի և հանգստի կազմակերպման աշխատանքներում:
- Կազմակերպվել է մարզի անապահով ընտանիքների 300 դպրոցահասակ երեխաների հանգիստը Հանքավանի <<Հասմիկ>> ճամբարում՝ պետական բյուջեի միջոցներով: Ավելի քան 250 երեխաներ հանգստացել են Սևանի, Դիլիջանի, Արզնիի ճամբարներում՝ Արմավիր, Էջմիածին և Մեծամոր համայնքների և հասարակական կազմակերպությունների միջոցներով:

- ‘‘Դպրոցական սնունդ’’ ծրագրում ընդգրկված են 40 դպրոցներ, տարրական դասարանների 5578 աշակերտներով: Այս ուսումնական տարվանից ծրագրում կընդգրկվեն ևս 5 դպրոցներ :
- 2015-2016 ուսումնական տարվա ընթացքում ավարտվել է Ակնաշենի և Նալբանդյանի միջնակարգ դպրոցների հիմնանորոգումը, վերանորոգման աշխատանքներ են իրականացվել Գետաշենի, Մրգաշատի N 2, Մարգարայի միջնակարգ, Վաղարշապատի N 2 հատուկ, Վաղարշապատի N 8 հիմնական, Վաղարշապատի N 12 հիմնական, Մեծամորի N 1 հիմնական դպրոցներում, լոկալ ջեռուցման համակարգեր են կառուցվել Արաքսի և Զարթոնքի միջնակարգ դպրոցներում: Պետական բյուջեի միջոցներով վերանորոգման աշխատանքներ են իրանակացվել Ոսկեհատի, Արտիմետի, Փարաքարի և Արմավիր քաղաքի N 11 մանկապարտեզներում:
- Նալբանդյանի միջնակարգ դպրոցի հիմնանորոգման և կահավորման, նոր մարզադահլիճի կառուցման գործում նշանակալի ներդրում են ունեցել կանադահայ բարերարներ Արմեն և Պերճուհի Նալպանտեանները, ում շնորհիվ համայնքն այսօր ունի ժամանակակից չափանիշներին համապատասխան դպրոցական շենք:
- Անհատ բարերարի միջոցներում կառուցվում է Արևադաշտի միջնակարգ դպրոցի շենքը, որը նախատեսվում է շահագործման հանձնել հաջորդ ուսումնական տարվա ընթացքում:
- Գազով լոկալ ջեռուցում ունեն մարզի 90, իսկ հեղուկ վառելիքով ջեռուցվում են 19, էլեկտրականությամբ՝ 5 դպրոցներ: Աշխատանքներ են կատարվում համայնքերի գազաֆիկացմանը զուգահեռ լոկալ ջեռուցմամբ ապահովել մարզի մյուս դպրոցները:

Նոր ուսումնական տարում մարզի կրթության համակարգի կարևորագույն խնդիրներն են՝

- *Ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի բարձրացում,*
- *Համալրել դպրոցների նյութատեխնիկական բազան՝ համապատասխանեցնելով նոր կրթակարգի չափորոշիչներին,*
- *Դպրոցահասակ երեխաների պարտուսի 100 % ապահովում,*
- *Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար պայմանների ստեղծում՝ ներառական կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու համար,*
- *Դպրոց-համայնք և դպրոց- ընտանիք կապի ամրապնդում:*

Հարգելի գործընկերներ

Մեզանից՝ մանկավարժներիցս, պահանջվում է որակապես նոր աշխատանք, նոր մոտեցումներ, նոր վերաբերմունք մեր աշխատանքի, մեր գործի, մեր պատասխանատվության իրական սահմանների նկատմամբ:

Ձեռք բերած հաջողությունները մերն են: Եկեք հպարտանանք դրանցով: Սակայն միևնույն ժամանակ մեզ պետք է անդադար մտահոգի այն հանգամանքը, որ անելիքներ շատ կան, նոր չափանիշներ ու սահմաններ կան, որոնք հարկավոր է նվաճել հետևողական ու նվիրված աշխատանքով: Ավարտելով խոսքս, բոլորիս մաղթում եմ քաջ առողջություն, բեղմնավոր և անբասիր աշխատանք և հաջողություններ մեր կարևորագույն աշխատանքում:

Թող մեր դպրոցներում կրթվեն հայրենասեր, բանիմաց քաղաքացիներ, ովքեր կդառնան մեր հայրենիքի և պետականության կերտման մարտիկներն ու արժանապատիվ ապագայի երաշխավորները:

Շնորհավոր նոր ուսումնական տարի: